«Թուֆենկյան Հոսփիթալիթի» ՍՊԸ

Ֆինանսական հաշվետվություններ և
Անկախ աուդիտորի եզրակացություն
2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

Հոկտեմբեր 2022
Երևան

«Թուֆենկյան Հոսփիթալիթի» ՍՊԸ
Տարեկան ֆինանսական հաշվետվություններ
2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Բովանդակություն

3	Անկախ աուդիտորի եզրակացություն
6	Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն
7	Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
8	Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
9	Սեփական կապիտալի փոփոխությունների մասին հաշվետվություն
10	Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրությունների ցանկ
11	Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ

Կազմակերպության գտնվելու վայրը	ՀՀ, Երևան, Հանրապետության-48
Իրավական ձևը՝	Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
Հիմնական գործունեության նկարագիրը՝	Հյուրանոցային ծառայությունների մատուցում, հյուրանոցների կառուցում, էլեկտրաէներգիայի արտադրություն և վաճառք
Տնօրեն՝	Հակոբ Հակոբյան

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Թուֆենկյան Հոսփիթալիթի» ՍՊԸ մասնակիցներին

Վերապահումով կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Թուֆենկյան Հոսփիթալիթի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետև՝ «Ընկերություն») ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, դրամական միջոցների հոսքերի և սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը։

Մեր կարծիքով, բացառությամբ մեր եզրակացության «Վերապահումով կարծիքի հիմքեր» բաժնում ներկայացված հարցի հնարավոր ազդեցության, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը 2021թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների (ՖՀՄՍ-ներ)։

Վերապահումով կարծիքի հիմքեր

2021թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության հիմնական միջոցներում ներառված են 3.1 միլիարդ դրամի ընթացիկ արժեքով հողամասեր և շենքեր, որոնք ըստ Ընկերության հաշվապահական քաղաքականության հաշվառվում են վերագնահատված արժեքով։ Հաշվետու ամսաթվի դրությամբ առկա է վերոնշյալ հիմնական միջոցների գծով իրական արժեքի փոփոխության հայտանիշներ, սակայն Ընկերությունը չի իրականացրել տվյալ ակտիվների վերագնահատում, որը մեր կարծիքով չի համապատասխանում «Հիմնական միջոցներ» ՀՀՄՍ 16-ի պահանջներին։
Մենք անկարող էինք ինքներս գնահատել հիմնական միջոցների իրական արժեքը հաշվետու ամսաթվի դրությամբ, հետևաբար այդ վերագնահատման ազդեցությունը Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա։

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի Միջազգային Ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան։ Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության “Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար” բաժնում։

Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՄԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՍԽ կանոնների։
Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր վերապահումով կարծիքն արտահայտելու համար։

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար։

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և կազմակերպության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ընկերությունը, ընդհատել նրա գործունեությունը, կամ երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:
Կառավարման լիազոր անձինք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի նկատմամբ վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:
Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում,
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար,
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը,
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող են նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանն դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը,

Հեռ՝ +37460 528899
Էլ փոստ՝ bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

ՀՀ, ք. Երևան
Դ. Մնհաղթի 23/6, 5-րդ
հարկ, տարածք 7

- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման լիազոր անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

«Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ

Վահագն Սահակյան, FCCA
Տնօրեն

Գնել Խաչատրյան, FCCA
Աուդիտի ղեկավար

17 հոկտեմբերի 2022թ
Երևան

Բի-Դի-Օ Արմենիա ՓԲԸ-ն հանդիսանում է բրիտանական Բի-Դի-Օ Ինթերնեյշնլ Լիմիթեդ ընկերության անդամ և Բի-Դի-Օ անկախ ընկերությունների միջազգային ցանցի անդամ:

«Թուֆենկյան Հոսփիթալիթի» ՍՊԸ
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն
2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

	Ծան.	2021թ. հազ. դրամ	2020թ. հազ. դրամ
Հասույթ	5	3,164,762	1,388,838
Ինքնարժեք	6	(2,833,710)	(1,491,656)
Համախառն շահույթ/(վնաս)		**331,052**	**(102,818)**
Այլ եկամուտ		6,664	48,993
Վարչական ծախսեր	7	(235,542)	(205,552)
Իրացման ծախսեր	8	(12,739)	(4,947)
Այլ ծախսեր	9	(23,564)	(8,735)
Գործառնական շահույթ/(վնաս)		**65,871**	**(273,059)**
Հիմնական միջոցների օտարումից օգուտ		833	-
Ֆինանսական եկամուտ		318	718
Ֆինանսական ծախսեր	10	(142,316)	(38,630)
Փոխարժեքային տարբերություններից օգուտ/(կորուստ), զուտ		229,890	(201,111)
Շահույթ/(վնաս) հարկումից առաջ		**154,596**	**(512,082)**
Շահութահարկի գծով (ծախս)/փոխհատուցում	11	(30,936)	31,222
Շարունակական գործունեությունից շահույթ/(վնաս)		**123,660**	**(480,860)**
Այլ համապարփակ եկամուտ		-	-
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք		**123,660**	**(480,860)**

Ֆինանսական հաշվետվությունները (էջ 6-37) հաստատվել են ղեկավարության կողմից 2022թ. հոկտեմբերի 17-ին:

Հակոբ Հակոբյան
Գլխավոր տնօրեն

Գեղամ Հակոբյան
Գլխավոր հաշվապահ

«Թուֆենկյան Հոսփիթալիթի» ՍՊԸ
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Ծան.	2021թ. հազ. դրամ	2020թ. հազ. դրամ
Ակտիվներ			
Ընթացիկ ակտիվներ			
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	12	800,049	564,491
Պաշարներ	13	442,195	292,207
Տրված փոխառություններ		60,458	20,458
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	14	80,006	218,645
		1,382,708	**1,095,801**
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	15	4,793,226	3,840,884
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ	16	503,379	1,005,818
Ոչ նյութական ակտիվներ		4,497	5,078
		5,301,102	**4,851,780**
Ընդամենը ակտիվներ		**6,683,810**	**5,947,581**
Պարտավորություններ			
Ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	18	2,346,920	2,434,814
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	17	1,661,366	978,232
Պարտավորություն վարձակալության գծով	16	26,699	141,206
		4,034,985	**3,554,252**
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	18	1,604,797	1,324,887
Պարտավորություն վարձակալության գծով	16	482,880	661,890
Հետաձգված հարկային պարտավորություններ	11	164,976	134,040
		2,252,653	**2,120,817**
Ընդամենը պարտավորություններ		**6,287,638**	**5,675,069**
Սեփական կապիտալ			
Կանոնադրական կապիտալ		112,470	112,470
Վերագնահատման պահուստ		1,447,783	1,447,783
Կուտակված վնաս		(1,164,081)	(1,287,741)
Ընդամենը սեփական կապիտալ	19	**396,172**	**272,512**
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ		**6,683,810**	**5,947,581**

«Թուֆենկյան Հոսփիթալիթի» ՍՊԸ
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

	Ծան	2021թ. հազ. դրամ	2020թ. հազ. դրամ
Գործառնական գործունեություն			
Իրացումից մուտքեր		4,492,405	2,156,314
Այլ մուտքեր		25,318	45,329
Վճարումներ մատակարարներին		(3,184,697)	(2,588,203)
Վճարումներ աշխատակիցներին		(465,760)	(408,297)
Վճարումներ հարկերի գծով		(355,050)	(240,933)
Այլ վճարումներ		(41,215)	(33,312)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր		**471,001**	**(1,069,102)**
Ներդրումային գործունեություն			
Ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման գծով վճարումներ		(55,008)	(34,539)
Ֆինանսական ակտիվների ձեռքբերման գծով վճարումներ, տրամադրված փոխառություններ		(40,000)	-
Ստացած տոկոսներ		-	2,117
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր		**(95,008)**	**(32,422)**
Ֆինանսական գործունեություն			
Վճարված տոկոսներ	18	(153,080)	(59,218)
Վարձակալության գծով կատարված վճարումներ	16	(105,532)	(120,749)
Ստացված վարկերի մուտք/ելք, (զուտ)	18	(156,555)	848,953
Ստացված փոխառություններից մուտք/ելք, (զուտ)	18	(91,923)	282,143
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր		***(507,090)***	**951,129**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ		**(131,097)**	**(150,395)**
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		(7,542)	16,248
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա սկզբի դրությամբ		218,645	352,792
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա վերջի դրությամբ	14	**80,006**	**218,645**

«Թուֆենկյան Հոսփիթալիթի» ՍՊԸ
Սեփական կապիտալի փոփոխությունների մասին հաշվետվություն
2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

	Կանոնադրական կապիտալ հազ. դրամ	Վերագնահատման պահուստ հազ. դրամ	Կուտակված վնաս հազ. Դրամ	Ընդամենը սեփական կապիտալ հազ. դրամ
01.01.2021թ. դրությամբ	**112,470**	**1,447,783**	**(1,287,741)**	**272,512**
Տարվա շահույթ	-	-	**123,660**	**123,660**
31.12.2021թ. դրությամբ	**112,470**	**1,447,783**	**(1,164,081)**	**396,172**
01.01.2020թ. դրությամբ	**112,470**	**1,447,783**	**(806,881)**	**753,372**
Տարվա վնաս	-	-	(480,860)	(480,860)
31.12.2020թ. դրությամբ	**112,470**	**1,447,783**	**(1,287,741)**	**272,512**